


Գ. ԲՐՈՒՏՅԱՆ

G. BRUTIAN

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵՏԱՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ARMENOLOGY AND METAARMENOLOGY



ԵՐԵՎԱՆ • YEREVAN

1999

9(47.925)
F-92

ՀԱՅՈՑ ՓԻԼՍՈՓԱՅԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ARMENIAN PHILOSOPHICAL ACADEMY

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Գ. ԲՐՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵՏԱՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ARMENOLOGY AND METAARMENOLOGY

3998



« ԳԱՄ հրատարակչություն
Երեւան - 1999

ԴՏՀ 1/14
ՉԱԴ 87.3
Բ 927

ԲՐՈՒՏՅԱՆ Գ.

Բ 927 Հայագիտություն եվ մեդիագիտություն. Եր.: ՀՀ ՉԱԱ «Գիտություն»
հրատ., 1999, 44 էջ:

Առևն աշխատության հեղինակությամբ հրատարակվել են ավելի քան 50 գիրք եւ գրքույկ եւ շուրջ 300 հոդված աշխարհի տարբեր երկրներում, 20 լեզուներով:

There are published G. Brutsyan's more than 50 books and booklets and approximately 300 articles in different countries, in 20 languages.

Հայագիտության եւ նվիրված Գ. Բրուտյանի հետևյալ գործերը:

Brutsyan's following works are devoted to Armenology:

- «Շղիշն Չարենցի փիլիսոփայական ուղբայինները» /1954/: ՀՍՍՀ գիտությունների ակադեմիա. «Տեղեկագիր», հասարակական գիտություններ 12, էջ 3-14:
- «Անտոն Գարագաշյանի ուսմունքը տրամաբանության մասին» /1962/: Գիտական տեղեկատվության կենտրոնի փիլիսոփայական գիտությունների սերիա, հ. 80, պրակ 1-2 /էջ 69-85/, Երեւան, Երեւանի պետական համալսարան:
- «Dvehijadugodisnjica jermenske filozofske misli» /սերբերեն/ /1966/. Filozofija, Broj 2, p. 225-232, Beograd.
- «Դավիթ Անհաղթի ուսմունքը սահմանման եւ բաժանման մասին» /1979/: Պատմաբանասիրական հանդես 3, էջ 32-56, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիա:
- «Դավիթ Անհաղթի ուսմունքը մտահանգման մասին» /1979/: Հասարակական գիտությունների լրագրեր 10, էջ 32-58, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիա:
- «Թարգմանչական արվեստը տրամաբանության հայեցակետից» /1980/: Սովետական գրականություն 2, էջ 129-164:

Учение о логике - главное содержание теоретического наследия Давида Непобедимого (Анахта) (1980). Ереван.

Հարունակությունը տես էջ 44, /continued on p. 44/:

Բ 0301080000
703 (02)99

ՉԱԴ 87.3

© ՀՀ ՉԱԱ «Գիտություն» հրատարակություն, 1999

Հ Ա Յ Ա Գ Ի Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԵՎ Մ Ե Տ Ա Հ Ա Յ Ա Գ Ի Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գիտության պարզացումը մեր օրերում հանգեցրել է մեդիագիտության ստեղծման անհրաժեշտությանը: Դա վերաբերում է գրեթե՝ բոլոր գիտություններին: /Երբեմն գիտության փոխարեն օգտագործվում է տեսություն հասկացությունը, որին համապատասխանում է մեդիատեսություն հասկացությունը/²: Այսօր մենք խոսում ենք ոչ միայն մաթեմատիկայի, տրամաբանության, լեզվաբանության, կենսաբանության եւ այլ գիտությունների մասին, այլ նաեւ մեդիամաթեմատիկայի, մեդիատրամաբանության, մեդիալեզվաբանության, մեդիակենսաբանության եւ այլ մեդիագիտությունների մասին:

Եթե գիտության առարկան իրականությանը համապատասխան օրինաչափությունների ուսումնասիրությունն է, ապա մեդիագիտության առարկան իր իսկ գիտության բնույթի, կառուցվածքի, այն մեթոդների հետազոտությունն է, որոնցով գիտությունն իրականացնում է իր ուսումնասիրությունները: Դա հիմք է տալիս պնդելու, որ մեդիագիտության հասկացություններն ավելի ընդհանրական բնույթ ունեն, ավելի լայն ընդգրկումներ, քան գիտության համապատասխան հասկացության ծավալները: Հենց այդ պատճառով էլ տողերիս հեղինակը այն համոզման է, որ մեդիագիտություն կարող է ունենալ ցանկացած գիտություն, բացի փիլիսոփայությունից: Չի կարելի փիլիսոփայության համար ստեղծել մեդիափիլիսոփայություն, քանի որ չկան ավելի լայն ծավալի հասկացություններ, քան փիլիսոփայության մեջ գործառող հասկացություններն են: Այդ նկատառումով էլ փիլիսոփայությունը եւ՝ տեսություն է, եւ՝ մեդիատեսություն (Брутян 1984, 1985)³:

Գիտական գրականության մեջ կարելի է հանդիպել ցանկացած գիտությանը համապատասխանող մեթոդագիտության անվանմանը, սահմանմանը, ի բացառյալ հայագիտության եւ նման այլ գիտությունների: Թերեւս դա պատահական չէ: Հայագիտությունը եւ մեթոդագիտությունը հարաբերակցական հասկացություններ են: Առանց հայագիտության, որպէս տեսության, մասին պարզ եւ հնարավորին չափ ստույգ պատկերացում ունենալու, չի կարելի անգամ առաջադրել մեթոդագիտության գաղափարը:

Պէտք է ընգծել, որ հայագիտության բնագավառում կան զգալի հաջողություններ, գիտական ներդրումներ՝ ինչպէս Հայաստանի գիտական կենտրոններում, այնպէս էլ աշխարհի փարբեր երկրների համալսարանների հայագիտական ամբիոններում: Դրանք ի մեծի մասի վերաբերում են կոնկրետ այս կամ այն հարցի, խնդրի, այս կամ այն բնագավառի նյութի հայեցի բնույթի տեսանկյունից: Ասկայն ժամանակն է զբաղվել նաեւ այն պրոբլեմով, թե ի՞նչ է հայագիտությունը, սահմանել հայագիտության՝ որպէս գիտության առարկան, պարզել հայագիտության հարաբերությունները գիտության այլ ճյուղերի հետ, որոշել հայագիտության տեղը գիտությունների համակարգում եւ այլն:

Այս հարցերը չեն սպառում խնդրո առարկան եւ, ըստ էության, փարբեր կարգի, ավելի ստույգ՝ ընդհանրացման փարբեր մակարդակի հարցեր են:

Առաջին հարցը, որի պատասխանը մյուս հարցերի քննարկման նախապայմանն է, «ի՞նչ է հայագիտությունը» հարցն է: Այդ հարցի պատասխանը կարող է լինել ինչպէս հայագիտության առարկայի սահմանումը, այնպէս էլ այդ նույն առարկայի որոշ հատկությունների թվարկումը՝ համապատասխան բնութագրությամբ: Առաջին դեպքում հայագիտության մասին հաղորդվող գիտելիքը զգալիորեն հակիրճ կլինի, բայց ստույգ կբացահայտի սահմանվող հասկացության բովանդակությունը, այդ հասկացության մեջ արտացոլված առարկաների էական հատկությունները: Երկրորդ դեպքում հնարավորություն է ընձեռվում համեմատաբար ավելի

հանգամանորեն բնութագրել հայագիտության առարկան՝ թվարկելով վերջինիս ինչպէս էական, այնպէս էլ որոշ ոչ էական հատկություններ:

Հարկ է նշել, որ այն սակավ դեպքերում, երբ խոսվում է հայագիտության մասին /հիմնականում դա փոքի է ունենում որոշ հանրագիտարաններում/, անորոշությունը, ոչ ճշգրտությունը խախտում է սահմանները նշված երկու դեպքերի միջեւ, մի հանգամանք, որ աներկբայորեն խոսում է քննարկվող հարցի դեռեւս անմշակ լինելու մասին:

Եթե մտովի վերականգնվի հայագիտության պատմությունը, ապա կարելի կլինի նկատել, որ հայագիտությունն ուսումնասիրում է հայ իրողությանը վերաբերող նյութ: Նյութի հայեցի լինելն է, որ գրավում է հայագետի ուշադրությունը: Ուսումնասիրությունը կարող է իրականանալ գիտության ցանկացած բնագավառում, միայն թե քննարկվող հարցն առնչություն ունենա հայ իրականության հետ: /Սա դեռեւս հայագիտության, որպէս գիտության նկատմամբ առաջին մոտեցումն է եւ ամենէին հավակնություն չունի անվանվելու հայագիտության սահմանում/:

Ասկայն մինչ հայագիտություն հասկացության սահմանմանն անցնելը կանգ առնենք մի տերմինի՝ «մեթոս» տերմինի վրա, որի հետ առնչվող քննարկումները կարող են օգնել հայագիտության ավելի ստույգ ըմբռնմանը: «մեթոս» տերմինն առաջացել է առաջին դարում մեր թվարկությունից առաջ: Տերմինի ներմուծողն է եղել Անդրոնիկ Հոռոտսցին /Ալեքսանդրիա քաղաքից/: Արիստոտելի երկասիրությունները դասակարգելիս, գրադարանավար Հոռոտսցին հիմք է ընդունել այդ երկերի բովանդակությունը: Այն, ինչ գրադարանավարի ըմբռնմամբ վերաբերել է բնագիտական պրոբլեմներին՝ ֆիլիկային, առանձնացրել է, իսկ Արագիդի մյուս հետապոտություններն /որոնք ի մեծի մասի վերաբերել են բուն փիլիսոփայական մեկնաբանություններին/ Հոռոտսցին անվանել է «մեթոսֆիլիկա», որը նշանակել է «ֆիլիկայից հետո»: Այսպիսով, «մեթոս» նախածանցն օգտագործվել է «ինչ-որ բանից հետո» նշանակությամբ:

Գիտության պարմությունը վկայում է, որ «մեզա» նախածանցով առաջացել են զգալի բանակությանը տերմիններ, որոնցում այդ նախածանցն այն դերը չի կատարում, ինչ «մեզաֆիլիկա» բառում (Брутян 1984): Իհարկե, կան նաև այլ դեպքեր, որոնք նկատելիորեն հիշեցնում են «մեզաֆիլիկա» բառի առաջացումը: Բոլոր դեպքերում հատուկ ուշադրության է արժանի «մեզամաթեմատիկա» բառի առաջացումը: Այդ մտահղացման գործում առանձնապես մեծ է Դ. Հիլբերտի դերը: Պ. Բեռնայսի հետ համատեղ գրած «Մաթեմատիկայի հիմունքներ» երկհատոր գրքի առաջին հատորի երկրորդ գլուխը (§5) վերջանում է այն կշռադատությամբ, թե առաջացել է հեղափոխության նոր դաշտ՝ տրամաբանական ելրահանգման ձևայնացումը ձևակերպվել է որպես ապացուցման տեսություն: Այս տեսությունը գրքի հեղինակներն անվանում են նաև մեզամաթեմատիկա (Д.Гильберт, П.Бернайс 1982:72): Այս գաղափարը հետագայում լայն կիրառում ստացավ, հստակեցվեց եւ, միեւնույն ժամանակ, հիմք ծառայեց կիրառելու նաև մեզագիտություն եւ մեզատեսություն հասկացությունները, որոնք ըմբռնվում են որպես համիմաստ հասկացություններ:

Մեկ այլ հասկացություն, որի ըմբռնումը կարելի է ինչպես հայագիտության, այնպես էլ մեզահայագիտության ըմբռնման համար՝ մեզալեզու հասկացությունն է:

Նախապես նշենք, որ «լեզուն» բազմիմաստ (polysemantic) բառ է եւ արտահայտում է տարբեր հասկացություններ: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է բնական լեզվին՝ որպես մտքերի ձևավորման եղանակի, մտքերի կրողի եւ արտահայտման ձևի, մտքերի փոխանակման հիմնական միջոցի:

Ինչպես նշում է Է. Մենդելսոնը, լեզուն, որը մենք ուսումնասիրում ենք, կոչվում է օբյեկտ-լեզու, իսկ այն լեզուն, որով մենք ձևակերպում ենք եւ ապացուցում այդ օբյեկտ-լեզվի մասին որոշ արդյունքներ, կոչվում է մեզալեզու: Այնուհետեւ, հեղինակը նշում է, որ օբյեկտ-լեզվի եւ

մեզալեզվի միջեւ հակադրությունն (contrast) առկա է նաև օտար լեզուներ ուսանելիս. օրինակ, գերմաներեն դասավանդելիս, գերմաներենը օբյեկտ-լեզու է, իսկ անգլերենը, որով բացատրում ենք գերմաներենը՝ մեզալեզու (Mendelson 1979:32): Այս հասկացությունները, ի դեպ, գործառության լայն շրջանակներ ունեն հայագիտական հեղափոխությունների բնագավառում: Շատ հայագետներ իրենց աշխատությունները գրում են ոչ հայերենով: Ասվածից բխում է, որ եթե հայոց լեզվի մասին գրվում է այլ լեզվով, ապա նման հեղափոխության օբյեկտ-լեզուն հայերենն է, իսկ այն լեզուն, որով գրվում է հայոց լեզվի մասին, պետք է դիտարկվի որպես մեզալեզու:

Տարբերակելով իրարից օբյեկտ-լեզուն եւ մեզալեզուն, Ա. Չորչը (Church 1956:47)⁴ հայտնում է մի նկատառում, որը սկզբունքային նշանակություն ունի եւ որը ցույց է տալիս մի կարեւոր դեպք, երբ օբյեկտ-լեզուն եւ մեզալեզուն կարող են համընկնել: Չորչի մեկնաբանությամբ, երբ լեզուն օգտագործվում է նույն այդ լեզվով իր մասին խոսելու համար, ապա պարզ է, որ այն չի կարող լինել ձևայնացված լեզվի կառուցման (setting up) մեթոդ: Սակայն, արդեն կառուցված լինելով, ձևայնացված լեզուն, եթե ունենա արտահայտման համապատասխան միջոցներ, կարող է ի վիճակի լինել ինքն իր մասին խոսելու եւ, մասնավորապես, վերահաստատելու, երին հաշվով, իր կառուցման եղանակը: Այդ դեպքում օբյեկտ-լեզուն եւ մեզալեզուն նույնանում են, որը կունենա կարեւոր նշանակություն հեղափոխությունների համար⁵:

Ի դեպ նկատենք, որ օբյեկտ-լեզվի եւ մեզալեզվի փոխհարաբերության, մասնավորապես, որոշ պայմանների դեպքում դրանց համընկնման մասին Չորչի վերոհիշյալ մեկնաբանությունը վկայում է, որ ոչ միայն փիլիսոփայություն ու մեզափիլիսոփայություն հասկացությունները, այլև նման կարգի այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են օբյեկտ-լեզուն եւ մեզալեզուն, երբեմն կարող են համիմաստ նշանակություն ունենալ: Նման դեպքերում պետք է նկատի

ունենալ, որ այդպիսի համընկնումները կարող են պայմանավորված լինել փարբեր գործոններով եւ ծառայել փարբեր նպատակների:

Հ. Կարրին ուշադրություն է դարձնում օբյեկտ-լեզու եւ մեթալեզու հասկացությունների ծավալների մասնակի համընկնման (overlap) վրա: Դա հանգեցնում է նրան մեթամեթալեզվի գաղափարին դիմելուն եւ, հետեւաբար, ցանկացած քանակության մակարդակներ ունեցող լեզուների ստորակարգ շարք (hierarchy) ստեղծելու հնարավորությանը (Curry 1963:31-32):⁶

Օբյեկտ-լեզվի եւ մեթալեզվի փարբերակումը հարաբերական է, եւ այն հարցը, թե կիրառվող լեզուներից որն է օբյեկտ-լեզուն եւ որն է մեթալեզուն, կախված է կիրառման համատեքստից:⁷

Մեթալեզուն կարող է լինել ձեւայնացված (Church 1956:47), կարող է լինել նաեւ առօրյա, ոչ ձեւայնացված լեզու (Quine 1970:36-37):⁸ Իհարկե, ձեւայնացված լեզուն ավելի մեծ հնարավորություններ է ընձեռում ստույգ, ճշգրիտ եպրահանգումների համար:

Հայագիտությունը կարելի է սահմանել որպես տեսություն գիտական գիտելիքի փարբեր բնագավառներում դրսեւորվող հայ իրականության բնորոշ առանձնահատկությունների մասին, որոնք հետազոտվում են համապատասխան գիտությունների կողմից՝ վերջիններիս ներհատուկ մեթոդներով:

Մեթահայագիտությունը կարելի է սահմանել որպես գիտություն, որը հետազոտում է հայագիտության բնույթը, տեղը գիտությունների համակարգում, ուսումնասիրության մեթոդները:

Այս սահմանումները մեկնաբանությունների կարիք ունեն:

1. Նախ նշենք, որ հայագիտության սահմանման մեջ տեսություն ասելիս պետք է հասկանալ առարկայական տեսություն (object theory):

2. Հայագիտությունը որպես տեսություն դրսեւորվում է այս կամ այն գիտության ձեւով: Դա նշանակում է, որ չկա հայագիտություն, որը չդրսեւորվի որպես կամ լեզվաբանություն կամ հնէաբանություն կամ փիլիսոփայություն կամ մաթեմատիկա եւ այլն:

2.1. Այստեղ մաթեմատիկան նշելը պատահական չէ: Հաճախ հայագիտությունը /գերմանագիտությունը, ռուսագիտությունը եւ այլն/ ներառնում են հումանիտար, հասարակական գիտությունների մեջ: Չի կարելի համաձայնել այս կարծիքի հետ: Հայագիտությունը /ինչպես եւ նմանատիպ գիտությունները/ կարող են դրսեւորվել ցանկացած գիտությունում, գիտության ցանկացած բնագավառում: Կարելի⁹ է կասկածել, արդյոք, թե ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Գ. Բ. Պետրոսյանի գիրքը՝ «Մաթեմատիկան Հայաստանում հին եւ միջին դարերում» /Երեւան, 1959/ վերաբերում է նաեւ հայագիտությանը: Իսկ այս օրինակը եզակի չէ: Սեկ օրինակ եւս՝ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Բ. Թումանյանի գիրքը՝ «Հայ աստղագիտության պատմություն» /Հ. 1,2, Երեւան, 1964, 1969/, «Երկրակենտրոն եւ արեւակենտրոն համակարգերը Հայաստանում» /Երեւան, 1973/ եւ այլն պատկանում են նաեւ հայագիտությանը:

3. Հայագիտության բնույթի առանձնահատկություններից մեկը, թերեւս իմացական տեսակետից կարեւորագույնն այն է, որ այդ տեսության առարկայական տիրույթը կարող է առնչվել գիտության ցանկացած բնագավառի հետ՝ լինի այն հումանիտար, հասարակական, բնագիտական, թե ֆիզիկա-մաթեմատիկական, տեխնիկական: Բավական է հիշել, որ հայկական նյութ կարող է առկա լինել յուրաքանչյուր գիտությունում, մի դեպքում որպես հայեցի իրականություն՝ բառիս բուն իմաստով, որը կարող է երկու փարբերակով դրսեւորվել: α/ եւ՝ հետազոտության նյութն է հայ իրողությունից, եւ՝ հեղինակն է հայ /օր. Հ. Սանանդյանը՝ հայ ժողովրդի ծագման մասին/, β/ հետազոտվող նյութը հայ

իրականությունից է, մինչդեռ հեղինակը՝ օտարազգի /օր. Ռ. Թոմսոնը՝ հայ ժողովրդի ծագման մասին: Կարող է դիտարկվել նաև այսպիսի դեպք. քննարկվող նյութն ապագային է, սակայն այն կարող է առնչություն ունենալ հայագիտության հետ այնքանով, որքանով հետապուրվել է հայ գիտնականի կողմից /օր. «Հովհաննես Ադամյանը որպես գունավոր հեռուստատեսության եւ լուսահեռագրության տեսության պիոներ»/: Այս դեպքը նախորդներից տարբերվում է նրանով, որ Հ. Ադամյանի կողմից հետապուրվող առարկան կապ չունի հայ իրականության հետ, նրա հետապուրությունը հայագիտական չէ: Մինչդեռ հետապուրությունը Ադամյանի մասին՝ որպես հեռուստատեսության եւ լուսահեռագրության պիոների, անշուշտ հայագիտական է:

4. Ըստ էության այն, ինչ վերաբերում է հայ իրողությանը, կարող է դառնալ գիտական հետապուրության նյութ՝ «երկակի ենթակայության» առարկա, որոնցից մեկը հայագիտությունն է, մյուսը՝ գիտության այս կամ այն կոնկրետ բնագավառը /լեզվաբանություն, կամ պատմություն, կամ մաթեմատիկա եւ այլն/: Այդ իրողությունը որպես կանոն կարելի է ներկայացնել, արտահայտել մի երկանդամ կոնյունկցիայով, որի առաջին անդամը /հայագիտություն/ հաստատուն է, իսկ երկրորդ անդամը՝ փոփոխական, կախված այն բանից, թե հայկական նյութը գիտելիքների ո՞ր բնագավառում է ընդգրկվում: Չեն բացառվում այն դեպքերը, երբ դիտարկվող կոնյունկցիան բաղկացած լինի երկուսից ավելի անդամներից: Դա տեղի է ունենում, երբ հայկական նյութը գիտելիքների համարեղ բնագավառում է ընդգրկվում /օրինակ, պատմության եւ լեզվաբանության բնագավառներում/ կամ էլ հայկական նյութը հանդես է գալիս նման բնույթի այլ ազգային նյութի հետ: Դրա օրինակը կարող է ծառայել Ֆր. Կոնիբերի գիրքը «Anecdota Oxoniensia. A Colation with the Ancient Armenian Versions of the Greek Text of Aristotle's Categories, de Interpretatione, de Mundo, de Virtutibus et Vitiis and of Porphyry's Introduction»: Գրքի վերնագրից

արդեն պարզ է, որ նշված աշխատասիրությունը վերաբերում է հայագիտությանը եւ հունագիտությանը՝ տեքստաբանության, թարգմանության եւ այլ խնդիրների տեսանկյունից, եւ փիլիսոփայությանը, տրամաբանությանը՝ գիտական իմացության այն բնագավառների տեսանկյունից, որոնք տվյալ դեպքում ներառում են հայկական եւ հունական նյութը /հմմ. Կոնիբեր 1893-ի հետ/:

5. Հայագիտության բնույթը պահանջում է տարատեսակ գիտելիքների իմացություն: Մի կողմից՝ անհրաժեշտ է իմանալ այն կոնկրետ բնագավառը, որն ուսումնասիրվում է, իմանալ այդ բնագավառի մասին ժամանակակից տեսությունը հիմնավորապես, մյուս կողմից՝ այն ամենը, որը դրսևորվում է որպես հայագիտական հետապուրության առանձնահատկություններ:
6. Հաճախ գիտությունների համակարգ հասկացությամբ է նախ եւ առաջ բնորոշվում հայագիտությունը, այն դիտարկվում որպես սեռային հասկացություն՝ հայագիտության նկատմամբ: Ստովի վերհիշենք հայագիտական հետապուրությունները, որոնք իրականացված են տարբեր երկրներում, տարբեր ժամանակներում եւ, մասնավորապես, մեր օրերում: Կարելի է ասել, թե որպես օրենք դրանք վերաբերում են այս կամ այն կոնկրետ հարցին եւ կարող են դիտարկվել նաև ընդհանրապես պատմության, լեզվաբանության, ճարտարագիտության, մաթեմատիկայի եւ, թերեւս, յուրաքանչյուր այլ գիտության պրոբլեմը: Դրանք անվանվում են «հայագիտական հետապուրություններ» միայն այնքանով, որքանով հետապուրության նյութը վերցված է հայ իրականությունից: Հայագիտության մեջ հնարավոր են արդյոք հայագիտության մեջ համալիր հետապուրություններ: Անշուշտ: Այսպես, օրինակ, հայ ժողովրդի ծագման հարցը պահանջում է պատմաբանների, լեզվաբանների, հնագետների եւ հարակից գիտությունների ներկայացուցիչների համարեղ ջանքերը՝ ինչպես իրենց տեսությունների, այնպես էլ ուսումնասիրման մեթոդների

օգտագործման տեսանկյունից: Բայց նման մոտեցում կարող է տեղի ունենալ եւ հաճախ տեղի է ունենում այլ գիտություններում եւս: Հետեւապես, «գիտությունների համակարգի» գաղափարը չէ, որով պիտի բնորոշվի հայագիտության առարկան, կամ որով հայագիտությունը տարբերվում է այլ գիտություններից:

7. Դառնալով հայագիտության տեղին՝ գիտությունների համակարգում, պետք է նշել, որ մինչեւ այժմ գիտությունների դասակարգման ոչ մի համակարգ չի կարող նշել հայագիտության /վերը նշված ըմբռնումով/ տեղն այդ համակարգում: Սովորաբար հայագիտությունը /ինչպես նաեւ հեթագիտությունը, վրացագիտությունը, գերմանագիտությունը եւ նման այլ գիտական տեսությունները/ դասում են հումանիտար գիտությունների, կամ էլ հասարակական գիտությունների /հաճախ չտարբերելով այդ գիտությունները/ շարքը: Դա արվում է շատ դյուրին ձեով՝ առանց խորանալու հայագիտության առանձնահատկությունների մեջ: Այնպես, ինչպես մաթեմատիկան՝ մեկ առումով, փիլիսոփայությունը՝ մեկ այլ առումով, յուրահատուկ տեղ են գրավում գիտությունների դասակարգման մեջ, այնպես էլ հայագիտությունը /եւ նմանապիպ այլ գիտությունները/ պետք է գտնի գիտությունների համակարգում այն տեղը, որ իրեն է պատկանում: Դա մտահայագիտության կարեւոր խնդիրներից մեկն է: /Տվյալ վեկուցման շրջանակները հնարավորություն չեն ընձեռում հանգամանալից խոսել այդ հարցի մասին/:

8. Մտահայագիտության համար ոչ պակաս կարեւոր խնդիր է հայագիտության հետազոտության մեթոդների պրոբլեմը:

Արդեն հայագիտության՝ որպես տեսության հատկությունները, դրա ուրույն տեղը գիտությունների համակարգում պայմանավորում են եւ հայագիտության մեթոդների առանձնահատկությունները: Գիտության տեսությունը եւ մեթոդները գտնվում են սերտ միասնության մեջ: Այդ ընդհանուր դրույթը, որն ապացուցված է գիտական

հետազոտությունների դարավոր պրակտիկայում, անշուշտ, վերաբերում է նաեւ հայագիտությանը:

Հայագիտության մեթոդների նկարագրությունը, բնույթի բացահայտումը հատուկ ուսումնասիրության նյութ է: Տվյալ դեպքում կսահմանափակվենք մի շարք սկզբունքային դիտողություններով, որոնց քննարկումը թերեւս խթան դառնա այդ մեթոդների հետագա համակողմանի քննարկմանը:

Հայագիտական հետազոտությունների առաջին իսկ ծանոթությունը ցույց է տալիս, որ դրանցում կիրառվում են, երբեմն՝ բացահայտ, երբեմն՝ ոչ բացահայտ, այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են պատմահամեմատական մեթոդը, հերմենեւտիկան, համատեքստային եւ ենթատեքստային վերլուծության մեթոդը, թարգմանությունը որպես տեքստի վերլուծության եւ ճշգրտման մեթոդ, օբյեկտիվությունը որպես հետազոտության մեթոդաբանական հնար, ապացուցողական մեթոդը եւ այլն: Այս մեթոդների համառոտ նկարագրությունը՝ հայագիտական տեսանկյունից, տրված է Բրուտյան 1999, Brution 1999a, 1999b գործերում: Տվյալ դեպքում կանգ առնենք մի շարք լրացուցիչ նկատառումների վրա:

8.1. Նախ, թվարկած մեթոդներն ամենեւին էլ չեն սպառում հայագիտության բնագավառում կիրառվող եւ կիրառվելիք մեթոդների բազմությունը: Քանի որ հայագիտությունն անմիջականորեն, կամ երբեմն էլ՝ միջնորդավորված ձեով, առնչվում է գիտության թերեւս բոլոր բնագավառների հետ, ուստի հայագիտական տարբեր հետազոտությունների դեպքում կիրառելի են այն մեթոդները, որոնք բնորոշ են քննարկվող գիտության առարկայական տիրույթին: Սակայն հայագիտության բնագավառում այս կամ այն գիտության մեթոդների կիրառումը սոսկ տեխնիկական ընդմիջարկություն կամ միջադրություն /ինտերպոլյացիա/ չէ: Ամեն մի գիտական մեթոդ, անկախ նրանից, թե ո՞ր գիտության բնագավառում է առաջացել, ստեղծվել եւ

լայն կիրառում ստացել, անհրաժեշտության դեպքում ներառվում է նաև հայագիտական ուսումնասիրությունների մեթոդաբանական պինանոցը, հայագիտական տեսության տեսանկյունից համապատասխան ճշգրտումներից /էքսպլիկացիայից/ հետո: /Ակնհայտ է, որ այս վերջին պնդումը վերաբերում է ոչ միայն հայագիտությանը, այլև ցանկացած այլ գիտության/:

8.2. Հայագիտական ուսումնասիրությունների մեթոդները միարժեք չեն ցանկացած հետազոտության համար: Դրանց նշանակությունը, կարեւորությունը պայմանավորվում է հայագիտության այն առարկայական տիրույթով, որին նվիրված է տվյալ հետազոտությունը: Ակնհայտ է, օրինակ, որ պատմահամեմատական մեթոդը շատ կարեւոր է հայագիտական այն հետազոտությունների բնագավառում, որոնք պատմական բնույթի են: Այդ նույն մեթոդի կիրառումը ««Ապիտակի երկրաշարժը Հայաստանում 1988 թ. եւ վերջինիս հետեւանքները»», ««Հայկական աշտուկի կայանի դերը արդի Հայաստանի տնտեսության մեջ»» թեմաների հետազոտման գործում ամենեւին էլ նշանակալից չի կարող լինել՝ անգամ հաշվի առնելով պատմական էքսկուրսի առկայությունը ցանկացած հետազոտությունում:

8.3. Տեսական, թերեւս, նաև կիրառական հետաքրքրություն է ներկայացնում հայագիտական ուսումնասիրություններում կիրառվող մեթոդների դասակարգումը: Այդ մեթոդները կարող են լինել համագիտական /մեթոդներ, որոնք հավասարապես նշանակություն ունեն ինչպես հայագիտության, այնպես էլ այլ գիտությունների համար/ եւ մասնավոր-գիտական /մեթոդներ, որոնք նշանակություն ունեն հայագիտության, կամ էլ մի խումբ գիտությունների համար, որոնք թվում է նաև հայագիտությունը/:

8.3.1. Վերը հիշատակված աշխատություններում /Բրուսյան 1999, Brutian 1999a, 1999b/ ոչ բոլոր նշված մեթոդներն են ակնհայտորեն միանշանակ՝ իրենց ընդհանրության եւ

նշանակության ու դերի տեսանկյունից: Ավելին, հիշատակված որոշ մեթոդներ /օբյեկտիվությունը որպես հետազոտության մեթոդաբանական հնար, ապացուցողական մեթոդ/ թերեւս ստույգ կլինի անվանել որպես յուրաքանչյուր գիտական հետազոտության անհրաժեշտ նախապայման: Իրոք, ամեն մի հետազոտող գիտության ո՛ր բնագավառով էլ պետք լինի լինի, նախ եւ առաջ պետք է լինի օբյեկտիվ, պետք է ձգտի ճշմարտության, եւ ոչ մի նկատառում նրան չպետք է շեղի ճշմարտության ուղուց: Նույնն էլ վերաբերում է գիտական հետազոտության ապացուցողականությանը: Եթե ապացուցման փոխարեն լրկ դեկլարատիվ հայտարարություններ են, ապա նման ուսումնասիրությունը չի կարող գիտական գործ համարվել:

8.4. Ի դեպ, ապացուցողականությունը հայագիտության ասպարեզում եւս կարող է դրսեւորվել ինչպես բովանդակային փաստարկների ուժով, այնպես էլ խստիվ տրամաբանական կառույցների, այդ թվում եւ տրամաբանական հաշիվների եղանակով: Ահա դրա մի օրինակը, որով կարելի է լուսաբանել թարգմանությունը որպես հետազոտության մեթոդ:

Նախ նկատենք, որ թարգմանությունը կարելի է հասկանալ տարբեր կերպ: Նշենք դրանցից մի քանիսը, որոնք կարելի են բննարկվող խնդրի համատեքստում:

8.4.1. Թարգմանություն մի բնական, խոսակցական լեզվից մեկ այլ բնական, խոսակցական լեզվի: Նման թարգմանության դեպքում հայտնաբերվում է բառերի ««տրեւում»», ավելի ստույգ՝ խորքում թաքնված իմաստը, ի հայտ է գալիս բնագրի թերությունները, երբեմն էլ սխալները, հնարավորություն է ընձեռվում ճշգրտել միտքը: Այսպիսի թարգմանությունը հնարավորություն է ընձեռում բովանդակային մտքեցմամբ բարձրացնել հետազոտության արդյունքների շարադրման ապացուցողական ուժը:

8.4.2. Թարգմանություն բնական, խոսակցական լեզվից տրամաբանական հաշիվների լեզվին եւ արդյունքի մեկնաբանումը: Նպատակը նույնն է, ինչ նախորդ դեպքում: Դա լուսաբանենք հետեւյալ օրինակով: ՀՅՂ դրոշի վրա գրված է՝ «Մահ կամ ապագություն» /1/: Ինչպե՞ս հասկանալ դա: Կարելի է ենթադրել հետեւյալը. «Կմեռնենք կամ ապագության կհասնենք»: Հավանաբար, այդ նշանաբանն առաջարկողները նշանաբանի նպատակը պատշաճ են ինտրոդյուցիայով՝ առանց այն վերլուծելու: Ճիշտ կլինի փոխել նշանաբանի անդամների տեղերը /մանավանդ, դիսյունկցիայի անդամների տեղերի փոփոխումից դիսյունկցիայի ճշմարտացիությունը չի փոխվում/: Այդ դեպքում կստանանք՝ «Ապագություն կամ մահ» /2/: Դա կարող է նշանակել. «Ապագության կհասնենք, կամ էլ կմեռնենք», կամ «Եթե ապագության չհասնենք, ապա կմեռնենք»: Նշանաբանի արտահայտման այս ձևն է /2/, որ ճիշտ է արտահայտում նպատակը: Դա կարելի է լուսաբանել մաթեմատիկական տրամաբանության /ասույթների հաշիվ/ հետեւյալ գործողություններով.

$$p \vee q /1^{\text{a}}/$$

$$q \vee p /2^{\text{a}}/$$

Այստեղ p -ն կնշանակի «Մենք կմեռնենք» ասույթը /սա դրոշի վրա գրված «մահ» արտահայտության բացահայտված ձևն է/: Համապատասխանաբար, q -ն կնշանակի՝ «Մենք կլինենք ապագա»:

Ձևափոխելք /1^a/ եւ /2^a/ ասույթները ասույթների համակարգի օրենքների համաձայն:

$$p \vee q \text{ համ. } p \rightarrow q /1^{\text{b}}/$$

$$q \vee p \text{ համ. } q \rightarrow p /2^{\text{b}}/$$

1^a) Ապագայի մեծ մեծ չլինելը կլինենք ապագա:

/2^a/ կկարդացվի. «Եթե մենք ապագա չլինենք, կմեռնենք»:

/1^b/ համապատասխանում է «Մահ կամ ապագություն» նշանաբանին, որը եւ ամրագրված է ՀՅՂ դրոշին եւ թյուր պատկերացում է տալիս նշանաբանի նպատակի մասին: /2^b/ կհամապատասխանի «Ապագություն կամ մահ» նշանաբանին, որով անհրաժեշտ է փոխարինել /1/ արտահայտությունը:

Թարգմանության այս ձևի նշանակությունը դժվար է գերազանադատել:


Սակայն չպետք է ենթադրել, որ բովանդակային խոսքը բանաձևերի լեզվին վերածելը տեքստի ապացուցողական ուժի միակ ամենավոր եղանակն է:

8.4.3. Ապացուցումն առանց համոզման միշտ չէ, որ կարող է հասնել իր նպատակին: Համոզելու համար անհրաժեշտ է հաճախ պարզեցնել միտքը, այն հնարավորին չափով դարձնել ակնառու: Դրան կարող է ծառայել թարգմանությունը գիտության մի լեզվից /հասկացության իմաստով/ գիտության մեկ այլ լեզվի, օրինակ, հանրահաշիվի լեզվից՝ երկրաչափության լեզվի /թարգմանության այս եւ նման եղանակների մասին մանրամասն տե՛ս Sawyer 1969/:


3998

Մի պարզ օրինակով լուսաբանենք դա: Պյութագորասի հայտնի թեորեմը՝ ուղղանկյուն եռանկյան ներքնաձգի քառակուսին հավասար է էջերի քառակուսիների գումարին, հանրահաշվում արտահայտվում է հետեւյալ հավասարմամբ՝ $a^2+b^2=c^2$: Այդ թեորեմը $a=b$ դեպքում վերածվում է $a^2+a^2=c^2$, այսինքն՝ $2a^2=c^2$ (3) տեսքի: Դա կարելի է արտահայտել հետեւյալ կերպ. հավասարասրուն ուղղանկյուն եռանկյան ներքնաձգի վրա կազմված քառակուսին երկու անգամ մեծ է, քան նույն եռանկյան էջի վրա կազմված քառակուսին: Եթե (3) արտահայտությունը հանրահաշիվի լեզվից թարգմանենք երկրաչափության լեզվի, այն կարելի է ներկայացնել հետեւյալ պատկերի միջոցով:

զծ. 1/ եւ, էլ ավելի պարզեցրած ձեւով՝ զծ. 2, որոնք ակնառու եւ համոզեցուցիչ են դառնում դիտարկվող հանրահաշվական առնչությունը:



զծ. 1



զծ. 2

9. Խիստ հրապաս հարց է հետազոտական մեթոդների /երկու եւ ավելի/ համադրել կիրառման պրոբլեմը հայագիտական ուսումնասիրությունում: Պրոբլեմը պայմանավորված է հայագիտության առարկայի բնույթով: Արդեն այն հանգամանքը, որ հայագիտության օբյեկտ-լեզուն առնչվում է գիտության տարբեր բնագավառների հետ, խոսում է այն մասին, որ երբեմն, թերեւս հաճախ, հայագիտական ուսումնասիրություններում հնարավոր չէ բավարարվել միայն մեկ մեթոդի միջոցով:

* * *

Երուսաղեմի հրեական համալսարանում հայագիտության 30-ամյակին նվիրված գիտաժողովում /մայիս, 1999/ տողերիս հեղինակն առաջադրեց հայագիտության հետազոտվող սահմանումը.

«...Հայագիտությունը գիտություն է, որի օբյեկտ-լեզուն հայեցի նյութն է, կամ էլ հետազոտում է հայոց լեզվի եւ հայ մշակույթի հենքի վրա ստեղծված մեդալեզու՝ որեւէ խնդիր լուծելու համար» (Բրուտյան 1999:11, Brutian 1999a:78, 1999b:10): Նշված այս գործերում ընդգծված է, որ առաջադրված սահմանումը հեղինակը դիտում է որպես աշխարհաբային վարկածի բնույթ ունեցող առաջարկ: Այժմ էլ այդ կարծիքին մնալով, հեղինակը փորձում է մեկնաբանել առաջարկված վարկածը, հույս ունենալով դրանով իսկ պայմաններ ստեղծել բարելավելու իր առաջարկը⁹:

Նախ նշենք, որ լեզու հասկացությունն օգտագործելիս տվյալ դեպքում գիտությունը ներկայացնում ենք որպես որոշակի լեզու: Բնական լեզվում մենք գործ ունենք բառամթերքի հետ /իմաստաբանություն /սեմանտիկա// եւ բառերի շղկապման ձևերի /կանոնների/ հետ /շարահյուսություն /սինտաքսիս//: Այս հասկացությունները էքստրապոլացիայի են ենթարկված եւ տարածված են գիտության վրա՝ համապատասխան ճշգրտումներով: Մենք խոսում ենք գիտության որպես լեզվի մասին, որն ունի նույնպես իր իմաստաբանությունը եւ շարահյուսությունը: Գիտությունը որպես լեզու համապատասխան հասկացությունների ամբողջությունն է /տրամաբանական իմաստաբանություն/ եւ մեթոդաբանական-տրամաբանական հնարների, եղանակների բազմությունը /տրամաբանական շարահյուսություն/, որոնց միջոցով կապակցում ենք առկա հասկացությունները եւ հանգում որոշակի անհրաժեշտ ելրահանգումների: Այդ իսկ պատճառով հայագիտության վերը նշված սահմանման մեջ, երբ խոսում ենք օբյեկտ-լեզվի եւ մեդալեզվի մասին, նկատի ունենք ոչ թե սովորական լեզուն, այլ գիտությունը որպես լեզու:

Կարելի է ասել, թե հայագիտության՝ վերն առաջադրված սահմանումը երկու տարբեր մակարդակներ է արտահայտում՝ օբյեկտ-լեզու /որը հայագիտության առարկայի քննարկման իրավասությանն է պատկանում/ եւ մեդալեզու, որը մեդալեզու հայագիտությանն է պատկանում:

Սակայն այստեղ ոչ մի անսովոր, առավել եւս՝ անընդունելի բան չպետք է տեսնել: Սա Կարիի՝ վերոհիշյալ /տե՛ս ծանոթագրություն 6/ դիտարկած դեպքի մասնավոր արտահայտություններից մեկն է: Եթե տվյալ դեպքում հայագիտության սահմանումը ներառում է ինչպես հայագիտության օբյեկտ-վեպլի հասկացությունը, այնպես էլ մետահայագիտության մի ինչ-որ ըմբռնում, ապա խնդրո առարկան դառնում է մետամետահայագիտության վերլուծության նյութը:

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ ներկա վեկուցման մեջ տրված հայագիտության սահմանումը եւ Երուսաղեմի հայագիտական գիտաժողովում առաջադրված սահմանումը փորձում են տարբեր գիտակետերից եւ, թերեւս, գիտության լեզվի ընձեռած տարբեր միջոցներով բացահայտել այն խնդիրները, որոնք դրված են հայագիտության առջեւ եւ այն մեթոդները, որոնցով պետք է լուծվեն նշված խնդիրները:

Սահմանվող առարկայի բազմաբնույթ եւ բազմախորք լինելը /իսկ հայագիտությունն այդպիսին է/ պայմանավորում է տարբեր սահմանումների հնարավորությունը: Դա շատ լավ էր հասկանում դեռեւս Դավիթ Անհաղթը, որը քննարկում է փիլիսոփայության վեց սահմանումները («Եւ պարտ է գիտել, թէ վեց են սահմանք իմաստասիրութեան, եւ են այսոքիկ: Նախ եւ առաջին, որ ասեն՝ թէ իմաստասիրութիւն է գիտութիւն գոյիցն, ըստ որում գոյք են: Երկրորդ, իմաստասիրութիւն է գիտութիւն աստուածայնոց եւ մարդկայնոց իրողութեանց: Երրորդ, որ ասէ՝ իմաստասիրութիւն է խոկումն մահու: Չորրորդ, առ այսոքիւք է սահման, որ ասէ, թէ իմաստասիրութիւն է նմանութիւն աստուծոյ ըստ կարողութեան մարդկան: Հինգերորդ, որ ասեն՝ թէ իմաստասիրութիւն է արհեստ արհեստից եւ մակացութիւն մակացութեանց: Վեցերորդ ի վերայ այսոցիկ, որ ասեն՝ իմաստասիրութիւն է սիրելիութիւն իմաստութեան»): /Դաիթ Անյաղթ 1980. 52/¹⁰: Այդ սահմանումներից առաջինը, երկրորդը եւ վեցերորդը պարկանում են Պյութագորասին, ընդամին Պյութագորասի սահմանումները մեզ են հասել նրա հետեւորդ Լիկոնասի գրառմամբ, երրորդ եւ չորրորդ սահմանումները՝ Պլատոնին, եւ հինգերորդ

սահմանումը՝ Արիստոտելին: Քննարկելով այս սահմանումները, Դավիթ Անհաղթը նպատակ է հետապնդում ոչ թե դրանցից միայն մեկն ընդունելու, այլ ցույց տալու, թե դրանցից յուրաքանչյուրն ինչ նշանակություն ունի փիլիսոփայության բազմաբնույթ ներսույթը բացահայտելու գործում:

* * *

Կարող է հարց առաջանալ. այն ամենը, ինչ այստեղ վերաբերվում է հայագիտությանը որպես որոշակի հետապնդության բնագավառի՝ իր գիտական կառուցվածքի կամ կաղապարի /մոդելի/ տեսակետից, արդյոք խստորեն տարբերվո՞ւմ է նմանադիպ այնպիսի բնագավառներից, ինչպիսիք են, ասենք, հեթագիտությունը, վրացագիտությունը, գերմանագիտությունը, ռուսագիտությունը եւ այլն: Այդ հարցին չի կարելի պատասխանել առանց լրացուցիչ հետապնդությունների: Կարծում եմ, որ նշված վեկուցման մեջ, ըստ էության, տրված են հայագիտության եւ մետահայագիտության այն անհրաժեշտ ելրագծերը եւ բնութագրումները, որոնց հիման վրա կարելի է ստեղծել հայագիտության, մետահայագիտության կաղապարները /մոդելները/: Եթե այդ կաղապարները մեկնաբանելիս հայագիտության՝ մի դեպքում, մետահայագիտության՝ մյուս դեպքում, տվյալները բավարարեն, ապա այդ կաղապարները ճիշտ են կազմված: Սակայն հնարավոր է, որ այդ կաղապարներին բավարարեն նաեւ այլ նմանադիպ գիտությունների տվյալները: Այդ դեպքում, այդ կաղապարներով կարելի է ղեկավարվել ոչ միայն հայագիտական եւ մետահայագիտական հետապնդություններում, այլ նաեւ վերը հիշատակած այս կամ այն համանման ուսումնասիրություններում: Հնարավոր է, որ առաջադրվող կաղապարներն այլ գիտություններին /հեթագիտություն, վրացագիտություն եւ այլն/ բավարարեն ոչ թե ամբողջությամբ, այլ մասնակիորեն: Այդ դեպքում, հնարավոր կլինի այդ կաղապարները վերափոխել այդ նպատակներին ծառայեցնելու համար:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գրեթե՛ն այսօրո՛ղ օգտագործված է դեռևս անորոշ իմաստով: Այդ հասկացության ստույգ իմաստային ուղղվածությունը հասկանալի կդառնա, երբ հետագա շարադրությունում խոսվի փիլիսոփայության եւ մետափիլիսոփայության մասին:

2. Կլինի մեկնաբանմամբ, որեւէ կոնկրետ ձեւական համակարգ քննարկելիս այն կարելի է անվանել «առարկայական տեսություն», իսկ դրան վերաբերող մետամաթեմատիկան՝ այդ առարկայական տեսության՝ «մետատեսություն» (Клини 1957. Հմմ. Kleene 1952: §15): Այս կապակցությամբ Հ. Կարին նկատում է, որ էպիտեսություն հասկացությունը ծնունդ է առել Հիլբերտի մետամաթեմատիկայից: Եվ այնուհետեւ. «... Բնական կլինի օգտագործել ոչ թե «էպիտեսություն», այլ «մետատեսություն» տերմինը»: /Բնագրում. The notion of epitheory is an outgrowth of Hilbert's metamathematics... It would be natural to use the term "metatheory" rather than "epitheory" (Curry 1963: 120):

Տեսության ընդհանուր պարկերը նկարագրելիս Ա. Կլինին նշում է երեք իրարից անկախ եւ իրարից տարբեր տեսություններ. (a) բովանդակային /ոչ ձեւական/ տեսություն, որի ձեւայնացմանը ծառայում է ձեւային համակարգը, (b) ձեւական համակարգ կամ առարկայական տեսություն եւ (c) մետատեսություն, որի շրջանակներում նկարագրվում եւ ուսումնասիրվում է այդ ձեւական համակարգը:

Ինչպես (a)-ն, այնպես էլ (c)-ն բովանդակային բնույթ ունեն, չունեն (b)-ին հատուկ ստույգ որոշակի կառուցվածք: (c)-ն տեսություն է, որն ուսումնասիրում է (b)-ն, այն կիրառվում

է (b)-ի նկատմամբ, անկախ (a) տերմիններով (b)-ի մեկնաբանումից (Клини 1957: 63: Հմմ. Kleene 1952: §15):

3. Տե՛ս ծանոթագրություն (1): Հարկ է նշել նաեւ, որ մետափիլիսոփայության այլ մեկնաբանություններ կան /տե՛ս "Metaphilosophy" հանդեսը, որը հրատարակվում է ԱՄՆ-ում, 1970 թվականից ի վեր/:

Թերեւս մետափիլիսոփայության տարբեր մեկնաբանումների համար հիմք է ծառայում մետամաթեմատիկա հասկացության ոչ միանշանակ ըմբռնումը: Դա վերաբերում է մասնավորապես մետատեսությունում կիրառվող մեթոդների սահմանափակ եւ ոչ-սահմանափակ մոտեցումներին: Կլինիի մեկնաբանմամբ, մետատեսությունում մենք կիրառում ենք միայն այն մեթոդները, որոնք ֆորմալիստներն անվանում են վերջնական (finitary), եւ որոնք օգտագործում են միայն ինտուիտիվ կերպով ներկայցվելիք առարկաները եւ իրականացվող պրոցեսները /Клини 1957: 61: Հմմ. Kleene 1952: §15/: Միեւնույն ժամանակ Կլինին նկատում է, որ որոշ հեղինակներ օգտվում են «մետա» նախածանցից, անվանելու համար այն լեզուն կամ տեսությունը, որոնց համար այլ լեզուն կամ տեսությունը դառնում են վերջնական մեթոդներով չսահմանափակվող ուսումնասիրման առարկա /Клини 1957: 62: Հմմ. Kleene 1952: §15/: Նկատենք նաեւ, որ նույն կարծիքին է Կլինիի հիշատակվող գրքի ուսերեն թարգմանության խմբագիր Վ.Ա. Ուսպենսկին /Клини 1957: 61, ծանոթ. 5/:

4. This device of employing one language in order to talk about another is one for which we shall have frequent occasion not only in setting up formalized languages but also in making theoretical statements as to what can be done in a formalized language, our interest in formalized languages being less often in their actual and practical use as languages than in the general theory of such use and in its possibilities in principle. Whenever we employ a language in order to talk about some language (itself or another), we shall

call the latter language the *object language*, and we shall call the former the *meta-language* (Church 1956: 47).

5. The employment of a language to talk about that same language is clearly not appropriate as a method of setting up a formalized language. But once set up, a formalized language with adequate means of expression may be capable of use in order to talk about that language itself; and in particular the very setting up of the language may afterwards be capable of restatement in that language. Thus it may happen that object language and meta-language are the same, a situation which it will be important later to take into account (Church 1956: 47).

6. Sometimes we wish to talk about one language L_1 within another language L_2 . In such a case it is customary to call L_1 the *object language*, L_2 , the *metalanguage*. It is not excluded that L_1 and L_2 may overlap. Ordinarily the object language will be a certain portion of the U language which it is agreed to remove from it, while the metalanguage is the U language after the removal. But sometimes we may wish to talk about languages L_1 and L_2 which are related to each other as object language and metalanguage, respectively; in that case we use a third language, L_3 , customarily called the *metametalanguage*. In this way we can continue to form hierarchies of languages with any number of levels. However, no matter how many levels there are, the U language will be the highest level: if there are two levels, it will be the metalanguage; if there are three levels, it will be the metametalanguage; and so on. Thus the terms "U language" and "metalanguage" must be kept distinct¹ (Curry 1963: 31-32).

7. Ինչպես նշում է Ա. Հասկը, երբ խոսում ենք ֆրանսերենով անգլերենի մասին, անգլերենը հանդես է գալիս որպես օբյեկտ-լեզու, իսկ ֆրանսերենը՝ որպես մետալեզու, իսկ երբ խոսում ենք անգլերենով ֆրանսերենի մասին, ֆրանսերենը դառնում է օբյեկտ-լեզու, իսկ անգլերենը՝ մետալեզու: Բնագրում. In talking about systems, the system being talked about is known as

the *object language*, the system being used to talk about it, the *metalanguage* (N.B. this is a relative rather than an absolute distinction; e.g. one might use French (the metalanguage) to talk about English (the object language) or English to talk about French.) (Haack 1979: 249).

8. Այս կապակցությամբ վկայակոչենք Ու.Բուլայնի խոսքերը. "In thus construing ordered pairs we do not assume that within the standard language under discussion - the *object language* - the values of the variables include sets, nor that they include ordered pairs in any sense. The use I propose to make of ordered pairs proceeds wholly within the *metalanguage* - the ordinary unformalized language in which I describe and discuss the object language". (Quine 1970: 36-37):

9. Հայագիտության տրված սահմանման մեջ /Brutian 1999a: 78 եւ Brutian 1999b: 10/ object բառի փոխարեն պետք է լինի object-language, որը համապատասխանում է հայերեն տարբերակում /Բրուլայան 1999. 11/ ճիշտ նշված օբյեկտ-լեզու բառակապակցությանը: Հայերեն տեքստում հայագիտության սահմանման մեջ /Բրուլայան 1999.11/ նշված «հայերենի հենքի վրա» արտահայտության փոխարեն պետք է լինի «հայոց լեզվի եւ հայ մշակույթի հենքի վրա» արտահայտությունը, այնպես, ինչպես գրված է անգլերեն տեքստերում /տե՛ս Brutian 1999a: 78 եւ Brutian 1999b: 10/:

10. Հմմ. It should be noted that there are six definitions of philosophy, as follows: The first: Philosophy is knowledge of existence as such. The second: Philosophy is knowledge of divine and human things. The third: Philosophy is contemplation of death. The fourth: Philosophy is becoming similar to God as far as it is humanly possible. The fifth: Philosophy is the art of arts and the science of sciences. The sixth: Philosophy is love of wisdom. (David the Invincible Philosopher 1983: 51):

ARMENOLOGY AND METAARMENOLOGY

The development of science today necessitates the creation of metascience. This will concern almost¹ all sciences. (Sometimes a concept of a theory is used instead of a science. The metatheory in these cases corresponds to the theory)². Today we speak not only of mathematics, logic, linguistics, biology and other sciences, but also of metamathematics, metalogic, metalinguistics, metabiology and other metasciences. If the subject-matter of science is the study of the laws of reality, then the subject-matter of metascience is the investigation of the very nature of science, its structure, and methods with the help of which science realizes its purposes. It gives a basis to affirm that the concept of metascience has a more general character and a wider grasp of corresponding concepts of science. That is why the author of this paper is sure that it is possible to have a metascience for any science, for any study, except philosophy. It is impossible to create metaphilosophy for philosophy because there are no concepts of larger extension than the concepts which we use in philosophy. That is why philosophy is both theory and metatheory at the same time (Брутян 1985, Brutian 1986)³.

In scientific investigations it is possible to note the term metaknowledge which refers to any science except Armenology (and similar studies). It is not accidental. Armenology and Metaarmenology are correlative concepts. It is impossible to propose even the idea of Metaarmenology without having the correlatively exact comprehension of Armenology as a theory.

It must be underlined that there are notable achievements and scientific contributions in the field of Armenology - in scientific centres of Armenia, as well as in famous universities around the world. These mostly refer to concrete problems from the point of view of their Armenian character (the material of such a

